

Հրահանգ

ՀՀ էներգետիկայի հանձնաժողով ներկայացվող տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերի լրացման

**Սույն հրահանգը կիրառվում է կազմակերպությունների կողմից
ինչպես միջանկյալ, այնպես և տարեկան ֆինանսական
հաշվետվությունները կազմելիս և ներկայացվող
տեղեկատվության ձևերը լրացնելիս:**

Կազմակերպության ֆինանսական հաշվետվությունները պետք է ներառեն նրա բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության ցուցանիշները:

Հաշվետու տարի է համարվում տվյալ տարվա հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

Միջանկյալ հաշվետու ժամանակաշրջան է համարվում հունվարի 1-ից մինչև հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը: Միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները կազմվում են աճողական կարգով (բացառությամբ Ձև N 2-ի, որում միաժամանակ ցույց են տրվում նաև տվյալ ընթացիկ հաշվետու միջանկյալ ժամանակաշրջանի տվյալները):

Նոր ստեղծված կազմակերպության համար առաջին հաշվետու տարի (ժամանակաշրջան) է համարվում նրա պետական գրանցման օրվանից մինչև տվյալ տարվա (ժամանակաշրջանի) վերջին օրը ներառյալ ընկած ժամանակաշրջանը:

Ֆինանսական հաշվետվությունները կազմվում են վերլուծական (անալիտիկ) և ընդհանրացված (սինթետիկ) հաշվառման տվյալների հիման վրա:

Սույն հրահանգին համապատասխան ներկայացվող ֆինանսական հաշվետվություններում տվյալները ցույց են տրվում հազար դրամներով՝ առանց ստորակետից հետո տասնորդական նիշի:

Ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների վերջին էջի համապատասխան մասում նշվում են կազմակերպության ղեկավարի և գլխավոր հաշվապահի (սահմանված կարգով նրանց փոխարինող անձանց) անունը և ազգանունը, որոնք ստորագրում են ֆինանսական հաշվետվությունները: Ֆինանսական հաշվետվությունները կնքվում են կազմակերպության կնիքով:

Ֆինանսական հաշվետվությունների 1-ից 5 ձևերը լրացվում են ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.1999թ. «Կազմակերպությունների տարեկան (ամբողջական փաթեթով միջանկյալ) ֆինանսական հաշվետվությունների ձևերը և դրանց լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 433 հրամանով սահմանված կարգով:

Եկամուտների հաշվետվություն (Ձև 1-1)

Սույն հաշվետվության լրացման իմաստով հիմնական է համարվում այն գործունեությունը, որի իրականացման համար ՀՀ էներգետիկայի հանձնաժողովի կողմից կազմակերպությանը սահմանված կարգով տրվել է համապատասխան լիցենզիա: Լիցենզավորված գործունեության մեկից ավելի տեսակներով զբաղվելու դեպքում յուրաքանչյուր տեսակի համար վարվում է առանձնացված հաշվառում և ներկայացվում առանձին հաշվետվություն:

Եկամուտների հաշվետվությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացվում ինչպես միջանկյալ (եռամսյակ, կիսամյակ, ինն ամիս), այնպես էլ տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար:

Հաշվետվության 1-ին կետում լրացվում է հիմնական գործունեությունից հասույթի, հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված, դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված հասույթի և հիմնական գործունեության գծով դուրս գրված կրեդիտորական պարտքերի հանրագումարը:

Հաշվետվության 2-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում հաշվեգրման մեթոդով հաշվարկված հիմնական գործունեությունից հասույթի ցուցանիշը (առանց ԱԱՀ-ի):

Հաշվետվության 3-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված, դրան անմիջապես նախորդող երեք տարիներում պակաս ցույց տրված հիմնական գործունեությունից հասույթի գումարը:

Հաշվետվության 4-րդ կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դուրս գրված և հիմնական գործունեությանը վերաբերող կրեդիտորական պարտքերի հանրագումարը:

Հաշվետվության 5-րդ կետում լրացվում է շահագործման և պահպանման ծախսերի ու ընդհանուր և կառավարչական ծախսերի հանրագումարը:

Հաշվետվության 6-րդ կետում լրացվում է ծախսերին դասվող՝ գնված բնական գազի, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի արժեքների, ուղղակի արտադրական ծախսերի, ընթացիկ ծախսերին դասվող նորոգման ծախսերի հանրագումարը:

Հաշվետվության 7-րդ կետում լրացվում է գնված բնական գազի, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի արժեքների գումարը: Այս կետում և ենթակետերում պահանջվող ցուցանիշները լրացվում են միայն բաշխիչ ընկերությունների կողմից:

Հաշվետվության 7.1 կետում լրացվում է կազմակերպության շահույթ-վնասը որոշելիս ծախսերի կազմում չներառվող (գերնորմատիվային

կորուստ)՝ գնված բնական գազի, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի արժեքների գումարը:

Հաշվետվության 7.2 կետում լրացվում է կազմակերպության շահույթ-վնասը (համաձայն «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի) որոշելիս ծախսերին դասվող՝ գնված բնական գազի, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի արժեքների գումարը:

Հաշվետվության 7.2.1 կետում լրացվում է կազմակերպության սեփական կարիքների համար սահմանված նորմատիվների սահմաններում փաստացի օգտագործված՝ գնված բնական գազի, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի արժեքների գումարը:

Հաշվետվության 7.2.2 կետում լրացվում է գնված բնական գազի, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի՝ սահմանված նորմատիվների սահմաններում փաստացի կորուստի արժեքների գումարը:

Հաշվետվության 7.2.3 կետում լրացվում է կազմակերպության կողմից փաստացի առաքված և գնորդների կողմից ընդունված բնական գազի, էլեկտրաէներգիայի, ջերմային էներգիայի արժեքների գումարը:

Հաշվետվության 8-րդ կետում լրացվում է արդյունաբերաարտադրական աշխատակազմի աշխատավարձի, պարգևատրումների և հավասարեցված այլ վճարների գումարի, սոցիալական ապահովության ծախսերի, ուղղակի արտադրական ծախսերի կազմում ընդգրկված նյութածախսի արժեքի, ուղղակի արտադրական ծախսերի կազմում ընդգրկված հիմնական միջոցների մաշվածության գումարի հանրագումարը:

Հաշվետվության 8.1 կետում լրացվում է ուղղակի արտադրական ծախսերի կազմում ընդգրկված արդյունաբերաարտադրական անձնակազմի աշխատավարձի, պարգևատրումների և հավասարեցված այլ վճարների հանրագումարը:

Հաշվետվության 8.2 կետում լրացվում է նախորդ կետում ընդգրկված վճարների նկատմամբ հաշվարկված սոցիալական ապահովության ծախսերի գումարը:

Հաշվետվության 8.3 կետում լրացվում է ուղղակի արտադրական ծախսերի կազմում ընդգրկված փաստացի նյութածախսի արժեքը:

Հաշվետվության 8.4 կետում լրացվում է ուղղակի արտադրական ծախսերի կազմում ընդգրկված հիմնական միջոցների մաշվածության գումարը:

Հաշվետվության 9-րդ կետում լրացվում է կողմնակի կազմակերպությունների ուժերով կատարված և ընթացիկ ծախսերին դասվող նորոգման աշխատանքների արժեքի ու սեփական ուժերով կատարված և ընթացիկ ծախսերին դասվող նորոգման աշխատանքների արժեքի հանրագումարը:

Հաշվետվության 9.1 կետում լրացվում է կողմնակի կազմակերպությունների ուժերով կատարված և ընթացիկ ծախսերին դասվող նորոգման աշխատանքների արժեքը:

Հաշվետվության 9.2 կետում լրացվում է սեփական ուժերով կատարված և ընթացիկ ծախսերին դասվող նորոգման աշխատանքների արժեքը:

Հաշվետվության 10-րդ կետում լրացվում է վարչակառավարչական ծախսերի, մարքեթինգային ծախսերի, հիմնական գործունեությանը վերաբերող վարձակալական ծախսերի, հիմնական գործունեության ընդհանուր ծախսերի կազմում տրանսպորտային ծառայությունների ծախսերի, հիմնական գործունեությունն իրականացնելու համար բանկային ծառայությունների ծախսերի, հիմնական գործունեությանը վերաբերող կոմունալ ծառայությունների ծախսերի, հիմնական գործունեությանը վերաբերող կապի ծառայությունների ծախսերի, հիմնական գործունեությանը վերաբերող աուդիտորական ծառայությունների ծախսերի, հիմնական գործունեությանը վերաբերող անհրաժեշտ

ապահովագրական ծախսերի, դատական ծախսերի, վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար հիմնական գործունեությանը վերաբերող վճարների ծախսերի, կադրերի պատրաստման և վերապատրաստման հետ կապված հիմնական գործունեությանը վերաբերող ծախսերի, հիմնական գործունեությանը վերաբերող այլ ծախսերի, ՀՀ օրենսդրությամբ սահմանված չփոխհատուցվող հարկերի, տուրքերի, մաքսավճարների, գործառնական գործունեության արդյունքում առաջացած տույժերի, տուգանքների, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դուրս գրված դեբիտորական պարտքերի, հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված, դրան անմիջապես նախորդող երեք տարիներում հիմնական գործունեության գծով պակաս ցույց տրված ծախսերի, հիմնական գործունեության հետ կապված վարկերի և փոխառությունների տոկոսների սպասարկման ծախսերի հանրագումարը:

Հաշվետվության 10.1 կետում լրացվում է վարչակառավարչական ծախսերի կազմում ընդգրկված աշխատավարձի և դրան հավասարեցված վճարների, սոցիալական ապահովության ծախսերի, գործուղման ծախսերի, գրասենյակային ծախսերի, ներկայացուցչական ծախսերի, նյութածախսի, վարչակառավարչական ծախսերում ընդգրկված հիմնական միջոցների մաշվածության գումարի, վարչակառավարչական ծախսերի կազմում ընդգրկված և կողմնակի կազմակերպությունների ուժերով կատարված տրանսպորտային ծառայությունների ծախսերի հանրագումարը:

Հաշվետվության 10.2 կետում լրացվում է կազմակերպության մարքեթինգային ծախսերի հանրագումարը:

Հաշվետվության 10.3 կետում լրացվում է հիմնական գործունեությանը վերաբերող վարձակալական ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.4 կետում լրացվում է կազմակերպության հիմնական գործունեության ընդհանուր ծախսերի կազմում տրանսպորտային ծառայությունների ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.5 կետում լրացվում է հիմնական գործունեությունն իրականացնելու համար բանկային ծառայությունների ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.6 կետում լրացվում է հիմնական գործունեությանը վերաբերող կոմունալ ծառայությունների ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.7 կետում լրացվում է հիմնական գործունեությանը վերաբերող կապի ծառայությունների ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.8 կետում լրացվում է հիմնական գործունեությանը վերաբերող աուդիտորական ծառայությունների ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.9 կետում լրացվում է հիմնական գործունեությանը վերաբերող անհրաժեշտ ապահովագրական ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.10 կետում լրացվում է կազմակերպության հիմնական գործունեությանը վերաբերող դատական ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.11 կետում լրացվում է վնասակար նյութերը շրջակա միջավայր արտանետելու համար հիմնական գործունեությանը վերաբերող վճարների ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.12 կետում լրացվում է կադրերի պատրաստման և վերապատրաստման հետ կապված կազմակերպության հիմնական գործունեությանը վերաբերող ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.13 կետում լրացվում է հիմնական գործունեությանը վերաբերող այլ ծախսերի գումարը:

Հաշվետվության 10.14 կետում լրացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված չփոխհատուցվող հարկերի (գույքահարկ, հողի հարկ) գումարը:

Հաշվետվության 10.15 կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության գործառնական գործունեությունից առաջացած տուրքերի գումարը:

Հաշվետվության 10.16 կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում կազմակերպության գործառնական գործունեությունից առաջացած մաքսավճարների գումարը:

Հաշվետվության 10.17 կետում լրացվում է կազմակերպության հիմնական գործունեության հետ կապված գործառնական գործունեության արդյունքում առաջացած տուրքերի գումարը:

Հաշվետվության 10.18 կետում լրացվում է կազմակերպության հիմնական գործունեության հետ կապված գործառնական գործունեության արդյունքում առաջացած տուգանքների գումարը:

Հաշվետվության 10.19 կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դուրս գրված և հիմնական գործունեությանը վերաբերող դեբիտորական պարտքերի հանրագումարը:

Հաշվետվության 10.20 կետում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանում հայտնաբերված դրան անմիջապես նախորդող երեք տարում պակաս ցույց տրված հիմնական գործունեությանը վերաբերող ծախսերը:

Հաշվետվության 10.21 կետում լրացվում է հիմնական գործունեությունն իրականացնելու համար վերցված վարկերի և փոխառությունների տոկոսների սպասարկման ծախսերը:

Հաշվետվության 11-րդ կետում լրացվում է կազմակերպության հիմնական գործունեության արդյունքը՝ որպես հիմնական գործունեությունից եկամուտների հանրագումարի և հիմնական գործունեության ծախսերի հանրագումարի տարբերություն:

Հաշվետվության 12-րդ կետում լրացվում է ոչ հիմնական գործունեության արդյունքը՝ որպես ոչ հիմնական գործունեության եկամուտների և ոչ հիմնական գործունեության ծախսերի տարբերություն:

Հաշվետվության 13-րդ տողում լրացվում է հիմնական գործունեության արդյունքի և ոչ հիմնական գործունեության արդյունքների հանրագումարը:

Հաշվետվության 14-րդ տողում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանին նախորդող հարկվող ժամանակաշրջանի վնասը՝ դրա առկայության դեպքում:

Հաշվետվության 15-րդ տողում լրացվում է կազմակերպության մինչև հարկումը զուտ շահույթի գումարը:

Հաշվետվության 16-րդ տողում լրացվում է կազմակերպության հարկվող շահույթի գումարը, որը ստացվում է մինչև հարկումը զուտ շահույթի գումարին ավելացնելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն շահութահարկի հաշվարկի ժամանակ վերականգնվող (հարկվող շահույթի գումարին ավելացվող) ծախսերի գումարը:

Հաշվետվության 17-րդ տողում լրացվում է «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն հաշվարկված շահութահարկի գումարը:

Հաշվետվության 18-րդ տողում լրացվում է հարկումից հետո կազմակերպության զուտ շահույթի գումարը, որը ստացվում է որպես մինչև հարկումը զուտ շահույթի և շահութահարկի ծախսի տարբերություն:

Հաշվետվության նյութածախսերի և այլ՝ փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի առկայության դեպքում համապատասխան տողի վրա դրվում է 6 հատ աստղանիշ և հաշվետվության վերջում տրվում լրացուցիչ տեղեկատվություն այդ ծախսերի (ըստ տողերի) մեծության վերաբերյալ:

**Տեղեկատվություն աշխատակիցների աշխատավարձի,
պարգևատրումների և այլ հավելավճարների մասին (Ձև 1-2)**

Սույն տեղեկատվությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացվում ինչպես միջանկյալ, այնպես և տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար՝ աճողական տվյալներով:

Սույն տեղեկատվությունը լրացնելիս այն կազմակերպությունները, որոնք արդյունաբերաարտադրական անձնակազմում որպես կառուցվացքային ստորաբաժանում չունեն տնօրենի, գլխավոր ճարտարագետի, տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի հաստիքներ , կազմակերպության նշված աշխատողների աշխատավարձի, պարգևատրումների և այլ հավելավճարների վերաբերյալ տվյալները ներկայացնում են կազմակերպության աշխատակազմի ոչ արդյունաբերաարտադրական անձնակազմի խմբում:

Տեղեկատվություն ձեռք բերված հիմնական միջոցների մասին (Ձև 1-3)

Տեղեկատվություն վարձակալված հիմնական միջոցների մասին (Ձև 1-3)

Սույն տեղեկատվությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացվում ինչպես միջանկյալ, այնպես և տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար՝ աճողական տվյալներով:

Տեղեկատվություն ապրանքանյութական արժեքների ելքի մասին (Ձև 1-4)

Սույն տեղեկատվությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացվում ինչպես միջանկյալ, այնպես և տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար՝ աճողական տվյալներով:

Սույն տեղեկատվությունը լրացնելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նյութական արժեքների ելքի ուղղությունը սյունակում տեղեկատվության ճիշտ լրացմանը, քանի որ տվյալ սյունակում նշված ելքի ուղղվածությունը համադրվելու է Ֆինանսական հաշվետվությունների փաթեթի մի քանի ձևերում ներկայացվող տվյալների հետ: Տեղեկատվությունը լրացնելիս ապրանքանյութական արժեքների միևնույն խմբի (օրինակ՝ պահեստամասեր) արժեքների ելքի տարբեր ուղղությունների (ընդգրկված է կազմակերպության հիմնական գործունեության ծախսերի մեջ, ընդգրկված է կապիտալ ներդրումներում, օտարված է) առկայության դեպքում ելքի յուրաքանչյուր ուղղության համար միևնույն խմբի ապրանքանյութական արժեքների շարժը ներկայացվում է առանձին տողով (4-րդ և 5-րդ սյունյակներում):

Տեղեկատվություն հիմնական միջոցների նորոգման մասին

(Ձև 1-5)

Սույն տեղեկատվությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացվում ինչպես միջանկյալ, այնպես և տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար՝ աճողական տվյալներով:

Տեղեկատվություն կապիտալ ներդրումների մասին (Ձև 1-6)

Սույն տեղեկատվությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացվում ինչպես միջանկյալ, այնպես և տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար՝ աճողական տվյալներով:

Տեղեկատվություն վարկերի մասին (Ձև 1-7)

Սույն տեղեկատվությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացվում ինչպես միջանկյալ, այնպես և տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար՝ աճողական տվյալներով:

Սույն տեղեկատվության մեջ ընդգրկվում են հիմնական գործունեության հետ կապված վարկերի վերաբերյալ տվյալները:

Տեղեկատվություն դեբետորական և կրեդիտորական

պարտքերի մասին (Ձև 1-8)

Սույն տեղեկատվությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացվում ինչպես միջանկյալ, այնպես և տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար՝ աճողական տվյալներով:

Տեղեկատվություն «Հայէներգո» ՊՓԲԸ ապրանքային

արտադրանքի և փաստացի վճարումների մասին (Ձև 1-9)

Սույն տեղեկատվությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացվում ինչպես միջանկյալ, այնպես և տարեկան հաշվետու ժամանակաշրջանի համար՝ աճողական տվյալներով:

Սույն տեղեկատվությունը ՀՀ էներգետիկայի հանձնաժողով է ներկայացվում միայն «Հայէներգո» ՊՓԲԸ կողմից: